

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

սլետական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 28.12.2015 թ. թիվ 1033 Լ/Կ հրամանի

### ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 24.12.2015թ.

Վանաձոր

2015թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1.1 «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Համալսարան) Լեզուների ուսուցման կազմակերպման իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը և Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կանոնակարգը:

1.2 Համալսարանում Լեզուների ուսուցման կազմակերպման նպատակներն են՝

ա. Լեզուների իմացության իրազեկության համաեվրոպական համակարգի պահանջների ապահովումը,

բ. օտար Լեզուների բնագավառում ունկնդիրների լեզվական գիտելիքների ձևավորումը, կրթական մակարդակի բարձրացումը, ամրապնդումը,

գ. Լեզուների ուսուցման բնագավառում շարունակական կրթության որակի բարելավումը:

## 2. ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

2.1 Համալսարանում Լեզուների ուսուցումը կազմակերպվում է Կենտրոնի կողմից:

2.2 Լեզուների ուսուցման աշխատանքների կազմակերպմամբ անմիջականորեն զբաղվում է Լեզուների ուսուցման աշխատանքների համակարգողը:

2.3. Մինչև Լեզուների ուսուցման աշխատանքների սկիզբը համապատասխան պատասխանատու ստորաբաժանումները (ամբիոն և ֆալուլտետ) մշակում, քննարկում և հաստատում են դասընթացի ծրագրերը:

2.4 Յուրաքանչյուր ուսումնական տարվա դասընթացների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով տրվում է հայտարարություն՝ դասընթացները սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ::

2.5 Ունկնդիրն ընդգրկվում է դասընթացում իր կողմից ներկայացրած համապատասխան դիմումի հիման վրա:

2.6 Դիմումների ներկայացման համար սահմանվում է 20-օրյա ժամկետ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում:

2.7 Մեկ դասընթացի ընդհանուր տևողությունը 3 ամիս է: Լեզուների ուսուցման դասընթացները կազմակերպվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա առաջին կիսամյակում՝ հոկտեմբերի 01-ից մինչև դեկտեմբերի 30-ը և երկրորդ կիսամյակում՝ մարտի 10-ից մինչև հունիսի 10-ը:

2.8 Ունկնդրի և Համալսարանի միջև կնքվում է պայմանագիր, որով սահմանվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, դասընթացի դիմաց ունկնդրից գանձվող վարձավճարի չափը:

2.9 Դասընթացների անցկացման ժամանակացույցը և տևողությունը համաձայնեցվում է Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ:

2.10 Դասընթացի կազմակերպման համար անհրաժեշտ լսարանային ֆոնդը համաձայնեցվում է ուսումնամեթոդական վարչության հետ:

2.11 Դասընթացները կազմակերպվում են խմբային սկզբունքով: Խմբերը ձևավորվում են նախապես անցկացված թեստավորման արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով սովորողների լեզվական իմացության մակարդակը:

2.12 Դասընթացները կազմակերպվում են շաբաթական երեք անգամ՝ 60 րոպե տևողությամբ:

2.13 Դասընթացները վարող դասախոսները նշանակվում են Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից կամ հրավիրված մասնագետներից՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի ներկայացմամբ՝ ռեկտորի հրամանով:

### **3. ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ**

3.1 Լեզուների ուսուցման դասընթացները կազմակերպվում են վճարովի հիմունքներով: Կազմակերպվող դասընթացների համար վարձավճարները յուրաքանչյուր ուսումնական տարվա համար սահմանվում է ռեկտորի հրամանով՝ գիտական խորհրդի կամ ռեկտորին կից ֆինանսատնտեսական հանձնաժողովի առաջարկությամբ:

3.2 Լեզուների ուսուցում իրականացնող դասախոսները վարձատրվում են առաջացած գումարների հաշվին՝ Համալսարանում տվյալ պահին գործող վարձատրության ժամավճարային կարգին համապատասխան:

3.3 Դասընթացի ավարտին անցկացվում է ամփոփիչ թեստավորում:

3.4 Դասընթացը հաջողությամբ ավարտած ունկնդրին տրվում է մասնակցության վկայական՝ լեզվական համապատասխան մակարդակի նշմամբ:

3.5 Ունկնդիրը հեռացվում է դասընթացից ուսման վարձը պայմանագրով սահմանված 10-օրյա ժամկետում չվճարելու, դասընթացների կեսից ավելին բացակայելու, ինչպես նաև պայմանագրով սահմանված այլ պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում: Դասընթացից հեռացված ունկնդրի վճարած վարձավճարը չի վերադարձվում:

### **4. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

4.1 Լեզուների ուսուցման աշխատանքների կազմակերպման և խմբերում ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման անմիջական վերահսկողությամբ զբաղվում են լեզուների ուսուցման աշխատանքների համակարգողը և Կենտրոնի ղեկավարը:

4.2 Լեզուների ուսուցման աշխատանքների կազմակերպման մեթոդները և ձևերը, դասավանդման ծրագրերը պարբերաբար վերանայվում են համապատասխան ամբիոններում:

4.3 Լեզուների ուսուցման աշխատանքների արդյունքներն ամփոփվում են Կենտրոնի ընթացիկ և տարեկան հաշվետվություններում: